

ԴԱՏԱՎԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Վահե Ենգիբարյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Քրեական դատավարության նրցակցության, անձի իրավունքների անձեռնմխելիության, իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, անմեղության կանխավարկածի, դատավարության ցանկացած փուլում իրավաբանական օգնության և պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հիմքում ընկած են այնպիսի դատավարական նորմեր, որոնք կարգավորում են քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների կիրառման և առաջին հերթին դատական փորձաքննության ինստիտուտը:

Քանի որ փորձագետի եզրակացությունը քրեական վարույթի ապացույցներից մեկն է, ուստի դատական փորձաքննության նշանակումը և իրականացումն առնչվում են դատավարության մասնակիցների որոշակի իրավունքներին: Բացի այդ, դատական փորձաքննությունը օբյեկտիվ տեղեկությունների աղբյուր է, որը ստացվում է հատուկ գիտելիքների շնորհիվ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), կարևորելով փորձաքննության ինստիտուտը, դրա նշանակումը արդարացիորեն չի համարում քննչական գործողություն, ինչպես նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգրքը), այլ սահմանում է որպես քրեական դատավարության առանձին ինստիտուտ: Օրենսգրքի գլուխ 35-ը կոչվում էր «Փորձաքննություն կատարելը», որը հետագայում հասկանալի պատճառներով փոփոխության ենթարկվեց և անվանվեց «Փորձաքննություն նշանակելը և կատարելը»:

Որպես ապացուցողական առանձին գործողություն՝ Նախագծով այդ հարցերը կարգավորվել են գլուխ 33-ով, որը վերնագրված է «Փորձաքննությունը»: Մինչդեռ ժամանակ Նախագիծը նշված գլխի 261-րդ հոդվածով կարգավորում է նաև փորձաքննության համար նմուշներ ստանալու կարգը, տեսակները: Օրենսգրքով հետագոտման համար նմուշներ ստանալը համարվում է առանձին քննչական գործողություն, և դրան նվիրված է առանձին գլուխ (գլուխ 36):

Համաձայն Օրենսգրքի 243-րդ հոդվածի՝ «Փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետի, ընթերականների հատուկ գիտելիքների ամկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Իսկ համաձայն Նախագծի 259-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»:

Ինչպես նկատում ենք, Նախագիծն ընդլայնել կամ չի սահմանափակել փորձաքննությունն նշանակելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների շրջանակը՝ սահմանելով «... կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ» արտահայտությունը, որը, կարծում ենք, միանգամայն տեղին է՝ նկատի ուենալով արդի ժամանակաշրջանի գիտական ու տեխնոլոգիական առաջընթացի աննախադեպ տեմպերը և դրանց կիրառումը փորձագիտական հետազոտությունների ընթացքում:

Փորձաքննություն նախաձեռնելու կարգի ամբողջական վերլուծության և դրա առանձնահատկությունների բացահայտման նպատակով՝ հարկ է անդրադառնալ նաև ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող *սուբյեկտների շրջանակին*: Այդ շրջանակի հստակեցումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ներպետական մակարդակով հանցագործությունների քննության գործընթացում, այլ նաև քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձաքննության նշանակման, կատարման և փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման գործում:

Օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն՝ «Փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի, բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Նշված քրեադատավարական դրույթում, փաստորեն, փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի մեջ ՀՀ օրենսդիրն ընդգրկել է *հետաքննության մարմնի աշխատակցին, քննիչին և դատախազին*:

Անհրաժեշտ է քննարկել այն հարցը, թե որքանով է Օրենսգիրքն ամբողջական և ճիշտ թվարկել փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների՝ փորձաքննության նախաձեռնողների շրջանակը, նշված սուբյեկտների շրջանակի մեջ ընդգրկված են արդյոք նման իրավասություն ունեցող բոլոր սուբյեկտները, Օրենսգրքի 243-րդ հոդվածում նշված չէ՞ն արդյոք այնպիսի սուբյեկտներ, որոնք, իրենց դատավարական կարգավիճակից ելնելով, դատական փորձաքննություն նշանակելու իրավասություն չունեն:

Ինչպես նշեցինք, Օրենսգրքի 243-րդ հոդվածում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող առաջին սուբյեկտը *հետաքննության մարմնի աշխատակիցն է*: Նշված հոդվածից կարելի է ենթադրել, որ հետաքննության մարմնի պետը փորձաքննություն նշանակելու լիազորությամբ օժտված չէ, քանի որ այդ հոդվածում օրենսդիրը սահմանափակվել է ընդամենը հետաքննության մարմնի աշխատակցի մասին նշումով: Մինչդեռ Օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ հետաքննության մարմնի պետը

նույնպես օժտված է փորձաքննություն նշանակելու իրավասությամբ:

Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հետաքննության մարմինը՝

- մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով կատարում է ղեկավար վայրի զննություն, հետազոտման համար վերցնում է նմուշներ և նշանակում փորձաքննություն (Օրենսգրքի 57 հոդվ. 2-րդ մասի 2-րդ կետ),

- քրեական գործ հարուցելուց հետո հանցագործություն կատարած անձին հայտնաբերելու, հանցագործության հետքերը հայտնաբերելու և ամրապնդելու ուղղությամբ կատարում է քննչական անհետաձգելի գործողություններ՝ զննություն, խուզարկություն, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների լսում, առգրավում, քննում, կասկածյալի ձերբակալում ու հարցաքննություն, տուժողների և վրեժխնդրի հարցաքննություն, առերեսում, նշանակում է փորձաքննություն (Օրենսգրքի 57 հոդվ. 2-րդ մասի 5-րդ կետ):

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածում տեղ գտած հիմնական հասկացություններին համապատասխան՝ հետաքննության մարմինը քրեական դատավարության օրենսգրքով հետաքննության իրավասություն ունեցող պետական մարմնի համապատասխան ստորաբաժանման պետն է և աշխատակիցները (Օրենսգրքի 6 հոդվ. 27-րդ կետ):

Այսինքն՝ ըստ ՀՀ քրեադատավարական օրենսդրության տրամաբանության՝ «հետաքննության մարմին» հասկացությունը ներառում է հետաքննության մարմնի պետին և աշխատակիցներին: Ընդ որում, հետաքննության մարմնի պետն ապահովում է հետաքննության մարմնի լիազորությունների կատարումն անձամբ և հետաքննության մարմնի աշխատակիցների միջոցով (Օրենսգրքի 57 հոդվ. 1-ին մաս):

Բացի դրանից, Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում թվարկվում են հետաքննության մարմնի բացառիկ իրավասությունները, որոնք բացառապես պատկանում են վերջինիս:

Այսպես, հետաքննություն կատարող անձի կողմից քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու, կասկածյալին ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, այն վերացնելու կամ փոփոխելու, համապատասխան քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար դատարանին միջնորդությամբ դիմելու, գործը քննիչին հանձնելու մասին կայացված որոշումները հաստատվում են հետաքննության մարմնի պետի կողմից (Օրենսգրքի 57 հոդվ. 3-րդ մաս):

Հետաքննության մարմնի պետն իրավունք ունի հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարել հանցագործության ղեկավար կատարել հետաքննություն, նրան տալ պարտադիր գրավոր ցուցումներ առանձին քննչական գործողություններ կատարելու մասին, գործը մի աշխատակցից հանձնել մյուսին, գործի քննությունը հանձնարարել մի քանի աշխատակիցների, մասնակցել հետաքննության կատարմանը և անձամբ կատարել հետաքննություն (Օրենսգրքի 57 հոդվ. 4-րդ մաս):

Այսինքն՝ բացի հետաքննության մարմնի աշխատակցին բնութագրական լիազորություններն իրականացնելուց, հետաքննության մարմնի պետն ունի նաև վերը թվարկված բացառիկ իրավասությունները, որոնք հետաքննության մարմնի աշխատակիցն իրականացնելու իրավասություն չունի:

Այսպիսով, վերը շարադրված հոդվածներից հետևում է, որ հետաքննության մարմնի պետը՝ որպես հետաքննության մարմին, իրավունք ունի անձամբ իրականացնել հետաքննություն, այդ թվում՝ նշանակել փորձաքննություն ինչպես մինչև քրեական գործ

հարուցելը, այնպես էլ դրանից հետո: Հետևաբար, Օրենսգրքի 243-րդ հոդվածում հետաքննության մարմնի պետին՝ որպես փորձաքննություն նշանակելու իրավասությանը օժտված սուբյեկտի չնախատեսելը, կարծում ենք, ՀՀ քրեադատավարական օրենսդրության բացթողումներից է: Ուստի նշված հոդվածում փորձաքննությունը նախաձեռնող սուբյեկտների շրջանակն անհրաժեշտ է լրացնել հետաքննության մարմնի պետով, կամ հոդվածում անհրաժեշտ է պարզապես նշել ոչ թե հետաքննության մարմնի աշխատակից, այլ հետաքննության մարմին:

Փորձաքննություն նշանակելու քննիչի իրավասությունը լիովին հիմնավորված է, այդ իսկ պատճառով, կարծում ենք, այդ հարցի լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն չկա, քանի որ քննիչը՝ որպես նախաքննության մարմին, քրեական գործն իր վարույթն ընդունելուց հետո գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, քրեական դատավարության օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն: Բնիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար (Օրենսգրքի 55 հոդվ. 3-րդ մաս):

Փորձաքննությունը նախաձեռնելու իրավասություն ունեցող սուբյեկտների հետ կապված՝ հատկապես անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել *դատախազի* իրավասությունը փորձաքննություն նշանակելու հարցում:

Օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատախազն օրենքով սահմանված կարգով նշանակված պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում իրականացնում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանում է մեղադրանքը, մասնակցում է դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված հարցերի քննարկմանը, բողոքարկում է դատարանի դատավճիռները և այլ վերջնական որոշումները: Դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազը կոչվում է մեղադրող»:

Հայտնի է, որ ՀՀ դատաիրավական բարեփոխումների արդյունքում էապես վերանայվեցին նաև դատախազության գործառույթների համակարգը, վերջինիս տեղն ու դերը պետական մարմինների համակարգում¹: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի² ընդունումից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններից հետո դատախազությունը զրկվեց քննություն իրականացնելու իր ավանդական գործառույթից, և դատախազությանը վերապահվեց ընդամենը քրեական հետապնդման, քննության նկատմամբ հսկողություն իրականացնելու և դատավարական ղեկավարման գործառույթները:

Այսպես, մինչև Օրենսգրքի 28.11.07 թ. ՀՕ-270-Ն փոփոխությունները³ Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում էր, որ «Դատախազը մինչդատական

¹ Մանրամասն տես՝ *Դիլբանդյան Ա., Հարությունյան Ա., Ղազինյան Գ., Ղուկասյան Հ.*, Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները, Եր., 2009, էջեր 269-273:

² Ընդունվել է 22.02.2007թ., ուժի մեջ է մտել 01.05.2007թ., ՀՀՊՏ 2007/9 (543), 11.04.07թ.:

³ Տես՝ ՀՀՊՏ 2007.12.26/66(590):

վարույթի ընթացքում լիազորված է՝ ... անձամբ քննել գործը լրիվ ծավալով՝ օրենսգրքի դրույթներին համապատասխան՝ նախաքննության ընթացքում ընդունելով անհրաժեշտ որոշումներ և իրականացնելով քննչական և այլ դատավարական գործողություններ...»:

Այսինքն՝ մինչև քրեադատավարական օրենսդրության 28.11.2007 թ. համապատասխան փոփոխությունները Օրենսգիրքը դատախազին լիազորում էր անձամբ իրականացնել քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակել փորձաքննություն: Այս օրենսդրական փոփոխություններով Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչվեց, ինչի հետևանքով դատախազությունը զրկվեց ինքնուրույն քննչական գործողություններ կատարելու, այդ թվում՝ փորձաքննություն նշանակելու իրավասությունից:

Ստացվում է, որ Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շարքում դատախազին նախատեսելը հակասում է դատախազության դերին և նրա կողմից իրականացվող՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործառնություններին: *Ուստի ՀՀ քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասում դատախազին որպես փորձաքննության նշանակման նախաձեռնող սուբյեկտ նախատեսելու անհրաժեշտություն չկա, և հարկավոր է նշված դրույթից դատախազին հանել փորձաքննություն նախաձեռնողների շրջանակից:* Կարծում ենք, նշված սուբյեկտների շարքում դատախազի նախատեսումը ՀՀ օրենսդրի անհետևողականության արդյունք է, քանի որ դատախազի գործառնությունների վերանայման ժամանակ՝ օրենսդրական փոփոխություններից հետո, համապատասխան փոփոխություններ չեն կատարվել նաև այլ հոդվածներում, այդ թվում՝ նշվածում⁴:

Հետաքրքիր է, թե *դատարանը* չի՞ մտնում արդյոք Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փորձաքննություն նախաձեռնողների շարքը:

Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Դատարանը* լիազորված է իր նիստերում քննել ու լուծել ստացված գործերը և նյութերը:

Մրցակցային դատավարության պայմաններում քրեական գործերի քննության գործընթացում մեղադրանքի և պաշտպանության իրավահավասար կողմերի ակտիվ մասնակցությամբ ընթացող դատավարությունում ՀՀ դատարանը հանդես է գալիս անկախ արբիտրի դերում, որի հիմնական գործառնությոնը գործն ըստ էության լուծելն է⁵: Միևնույն ժամանակ, գործի դատական քննության փուլում դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել գործով ճշմարտությունը բացահայտելու ուղղությամբ: Այս կապակցությամբ Օրենսգրքի 331-րդ հոդվածի 3-րդ մասը դատարանին իրավունք է վերապահում սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, *փորձաքննություն նշանակելու*, այլ ապացույցներ պահանջելու մասին: Այսինքն՝ նշված հոդվածում ուղղակիորեն խոսվում է դատարանի՝ փորձաքննություն նշանակելու իրավասության մասին: Բացի դրանից, քրեական գործի քննության և լուծման գործընթացում դատարանն իրականացնում է Օրենսգրքի 121-րդ հոդվածով նախատեսված դատական գործողություններ, որոնց արդյունքներն արտահայտվում են համապատասխան դատական գործողությունների արձանագրություններում, որոնք էլ քրեական գործով վարույթի ընթացքում կարող են օգտագործվել ա-

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս, **Վ. Ենգիբարյան, Լ. Դավթյան, Ա. Չախոյան**, Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները, գիտական ձեռնարկ: Խմբ. Վ. Գ. Ենգիբարյան: - Եր.: Անտարես, 2012, էջեր 235-246:

⁵ Տե՛ս **Դիլբանդյան Ս., Հարությունյան Ա., Դազինյան Գ. և ուրիշներ**, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք: Ընդհանուր մաս, Եր., 2006, էջեր 289-290:

պացույցներ գործով ճշմարտությունը բացահայտելու համար: Ընդ որում, հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքները հաստատելու անհրաժեշտության դեպքում դատարանն իրավասու է նշանակել փորձաքննություն և դրա կատարումը հանձնարարել համապատասխան բնագավառի մասնագետին փորձագիտական եզրակացություն ստանալու համար՝ այն գործով որպես ապացույց օգտագործելու նպատակով: Այսինքն՝ դատարանի համար դատական գործողություններ իրականացնելու իրավասություն նախատեսելը և փորձաքննություն նշանակելու իրավունք չնախատեսելն անտրամաբանական են ու հակասական: *Հետևաբար, 77 քր. դատ. օր.-ի 243-րդ հոդվածի 1-ին մասում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակն անհրաժեշտ է լրացնել նաև դատարանով, մասնավորապես եթե հաշվի առնենք, որ Օրենսգրքի 331-րդ հոդվածի 3-րդ մասում ուղղակիորեն խոսվում է փորձաքննություն նշանակելու՝ դատարանի իրավասության մասին:*

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք Օրենսգրքի 243-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Փորձաքննությունը կատարվում է **հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի** որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի **կամ այլ** բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի, մասնագետների, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Ընդ որում, նույն սուբյեկտների շրջանակն անհրաժեշտ է նախատեսել նաև լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունները կարգավորող քրեադատավարական դրույթներում՝ Օրենսգրքի 251-րդ հոդվածում, քանի որ դրանցում որպես լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն նշանակելու իրավասությամբ օժտված սուբյեկտներ են թվարկված դարձյալ հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը և դատախազը:

Նույն համատեքստում Օրենսգրքի 248-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, որոնք կարգավորում են փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկում, 249-րդ հոդվածի 1-ին մասում, որը կարգավորում է փորձաքննության կատարումը փորձագիտական հիմնարկից դուրս, ինչպես նաև փորձագետի հարցաքննությունը կարգավորող Օրենսգրքի 252-րդ հոդվածում խոսքը վերաբերում է միայն քննիչին: Այնինչ, ինչպես արդեն քննարկել ենք, Օրենսգրքի 243-րդ հոդվածում փորձաքննության նախաձեռնող սուբյեկտներ են հանդիսանում նաև հետաքննության մարմինը և դատարանը: Ուստի նշված հոդվածներում, քննիչից բացի, անհրաժեշտ է համապատասխան իրավասություններով օժտել նաև հետաքննության մարմնին և դատարանին:

Օրենսգրքի 244-րդ հոդվածը, որը կարգավորում է փորձաքննություն նշանակելու մասին որոշման կառուցվածքն ու բովանդակությունը, նման որոշում կայացնելու իրավասությամբ օժտել է *քրեական հետապնդման մարմնին*: Օրենսգրքի 6-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններն են դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը: Փաստորեն, Օրենսգրքի 244-րդ հոդվածը փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ անարդարացիորեն օժտել է դատախազին և դրանից զրկել դատարանին:

Այս տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի հարցում Նախագիծը դրսևորել է առավել որոշակի մոտեցում՝ 260-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանելով, որ փոր-

ծաքննությունը կատարվում է քննիչի որոշման հիման վրա: Սակայն միևնույն ժամանակ 339-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Դատարանը կողմի միջնորդությամբ կամ սեփական նախափեռնությամբ իրավասու է *նշանակել* (ընդգծումը մերն է) դատական փորձաքննություն՝ սույն օրենսգրքի 259-265-րդ հոդվածներում սահմանված վերաբերելի կանոնների պահպանմամբ»: Դատարանին՝ որպես փորձաքննություն նախաձեռնող մարմնի փորձաքննությունների վերաբերող ընդհանուր նորմերում նախատեսելու արդյունավետությանն արդեն անդրադարձել ենք, այդուհանդերձ խնդրահարույց է նաև քննարկվող նորմի ձևակերպման մեջ փորձաքննության «նշանակում» եզրույթի օգտագործումը այն դեպքում, երբ փորձաքննությունների կատարման ընդհանուր պայմանները սահմանող Նախագծի 33-րդ գլուխը, ի տարբերություն գործող Օրենսգրքի, նվիրված է փորձաքննության կատարմանը:

Այսպիսով, փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի վերաբերյալ քրեադատավարական դրույթները, մեր կարծիքով, բոլորովին հակասական են, թերի ու անկատար, ուստի վերանայման կարիք ունեն: Այդ հակասականության վերացման առաջին ճանապարհը համապատասխան իրավական նորմերում փորձաքննություն նշանակող սուբյեկտների հստակ և լրիվ շրջանակի ամրագրումն է: Ընդ որում, փորձաքննության նշանակման հետ կապված այլ հոդվածներում այդ սուբյեկտների ամբողջական շարքը անընդհատ թվարկելուց և կրկնություններից խուսափելու համար առաջարկում ենք քրեադատավարական համապատասխան նորմերում փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտներին կոչել *փորձաքննություն նախաձեռնող կամ փորձաքննություն նշանակող անձ*⁶: Այսպիսի մոտեցումն իրավաբանական տեխնիկայի առումով առավել մատչելի կդարձնի քրեադատավարական համապատասխան դրույթների կիրառումը:

THE SYSTEM OF FORENSIC EXPERTISE INITIATING BODIES BY THE NEW DRAFT OF CPC OF THE RA

Vahe Yengibaryan

*Associate professor of the Chamber of Criminal
Procedure and Criminalistics of YSU*

The author of the article referred to the one of the most important issues of a Forensic Expertology and Criminalistics namely the issue of competence to initiate judicial expertise, the characteristics of its legal regulation both by the Criminal Procedure Code of the RA and the Draft Criminal Procedure Code of the RA. In the Article it is also emphasized the scope of law enforcement bodies who are liable to initiate judicial expertise, their liability at various stages, as well as existing legal omissions in the existing law. The examining issues are highlighted by the scope of legal regulations of the Project, where forensic expertise is presented in a separate chapter as a procedural (evidential) action, in contrast to the current Criminal Procedure Code of the RA, by which regulation of appointment of the expertise is a separate investigative action.

⁶ Ուշագրավ է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 249-րդ և 250-րդ հոդվածներում խոսվում է «փորձաքննություն նշանակած» և «փորձաքննություն նշանակող անձի» մասին: Ցավոք, օրենսդիրը չի հստակեցրել փորձաքննություն նշանակող անձի օրենսդրական հասկացությունը, և այդ նույն հասկացությունը չի կիրառել անհրաժեշտ բոլոր դեպքերի համար:

СИСТЕМА ОРГАНОВ, ИНИЦИИРУЮЩИХ СУДЕБНЫЕ ЭКСПЕРТИЗЫ ПО НОВОМУ ПРОЕКТУ УПК РА

Ваге Енгибарян

*Доцент кафедры Уголовного процесса и криминалистики ЕГУ,
кандидат юридических наук*

В статье автор обсуждает одну из важнейших проблем теории судебной экспертологии и криминалистики - правовое регулирование, процесс инициирования судебной экспертизы в рамках как действующего УПК РА, так и проекта нового УПК РА, который находится на стадии обсуждения в Национальном Собрании РА. В статье анализируется круг лиц, уполномоченных инициировать судебные экспертизы, их полномочия на различных этапах расследования уголовного дела, а также существующие правовые пробелы в действующем УПК РА.

Выявленные вопросы имеют как теоретическую, так и практическую значимость. Они наиболее подчеркиваются в рамках правового регулирования проекта нового УПК РА, где экспертизы представлены в отдельной главе в качестве отдельного процессуального (доказательственного) действия, где в проекте экспертизам отведена отдельная глава, исполнение которой является отдельным доказательственным действием, в отличие от действующего УПК, в котором регулируется назначение экспертизы как отдельное следственное действие.

Բանալի բառեր – դատական փորձաքննություն, հատուկ գիտելիքներ, քրեական դատավարության օրենսգիրք, փորձագետ

Keywords: forensic expertise, special knowledge, criminal procedure code, legal amendments, expert

Ключевые слова: судебная экспертиза, специальные знания, уголовно-процессуальный кодекс, эксперт